

Խ-112²-18.04.2019-ԱԱ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-62-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 4.1-ին մասի 6-րդ կետը «1-ին կամ 2-րդ» բառերից հետո լրացնել «կամ 3-րդ բառերով»:

Հոդված 2. Օրենքը լրացնել նոր 21.1-ին մասով՝

«Հոդված 17.1. Հաշմանդամություն ունեցող անձիք բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգում

1. Ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնած 1-ին, 2-րդ կամ 3-րդ խմբերի հաշմանդամություն կամ հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձիք ընդունվում են պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների անվճար համակարգ՝ վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերով պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների անվճար համակարգում սովորող 1-ին, 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամի կարգավիճակ ունեցող անձիք տեղափոխվում են տվյալ ուսումնական հաստատության վճարովի համակարգ, եթե ուսումնառության ընթացքում կատարված բժշկասոցիալական վերափորձաքննության արդյունքներով չեն ձանաչվել հաշմանդամություն ունեցող անձ:

3. Պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում սովորող անձիք ուսումնառության ընթացքում հաշմանդամ երեխայի կամ 1-ին, 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձի կարգավիճակ ստանալու դեպքում տեղափոխվում են տվյալ ուսումնական հաստատության անվճար համակարգ:

4. Պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված 1-ին, 2-րդ և 3-րդ խմբի հաշմանդամներություն և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց ուսուցման ծախսերը կատարվում են պետական բյուջեի միջոցների հաշվին: Նրանց թվից ցերեկային ուսուցման հաշմանդամություն ունեցող անձանց,

հերթական քննությունները և ստուգարքները դրական գնահատականներով հանձնելու դեպքում, վճարվում է կրթաթոշակ՝ անկախ ստացվող նպաստից կամ թոշակից:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏՔՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-62-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 4.1-ին մասի 6-րդ կետը «1-ին կամ 2-րդ» բառերից հետո լրացնել «կամ 3-րդ բառերով»:

Հոդված 2. Օրենքը լրացնել նոր 21.1-ին մասով՝
«Հոդված 17.1. Հաշմանդամություն ունեցող անձիք բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգում

5. Ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնած 1-ին, 2-րդ կամ 3-րդ խմբերի հաշմանդամություն կամ հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձիք ընդունվում են պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների անվճար համակարգ՝ վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում:

6. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերով պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների անվճար համակարգում սովորող 1-ին, 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամի կարգավիճակ ունեցող անձիք տեղափոխվում են տվյալ ուսումնական հաստատության վճարովի համակարգ, եթե ուսումնառության ընթացքում կատարված բժշկասոցիալական վերափորձաքննության արդյունքներով չեն ձանաչվել հաշմանդամություն ունեցող անձ:

7. Պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում սովորող անձիք ուսումնառության ընթացքում հաշմանդամ երեխայի կամ 1-ին, 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձի կարգավիճակ ստանալու դեպքում տեղափոխվում են տվյալ ուսումնական հաստատության անվճար համակարգ:

8. Պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված 1-ին, 2-րդ և 3-րդ խմբի հաշմանդամներություն և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց ուսուցման ծախսերը կատարվում են պետական բյուջեի միջոցների հաշվին: Նրանց թվից գերեկային ուսուցման հաշմանդամություն ունեցող անձանց, հերթական քննությունները և ստուգարքները դրական գնահատականներով հանձնելու դեպքում, վճարվում է կրթաթոշակ՝ անկախ ստացվող նպաստից կամ թոշակից:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՇՎԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-112-18.04.2019-ԱԱ-011/1) ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՄԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑԿԱԾ ԱՌԱՋԱՐԿԻ

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒ ՆՔԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԻ ՈՐՈՇՈՒՄԸ
ՀԵՐԻՔՆԱԶ ՏԻԳՐԱՆՅԱՆ ԳՐԱԿՈՐ ԱՌԱՋԱՐԿ	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՇՎԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ (Խ-112-18.04.2019-ԱԱ-011/1)	<<Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին>> ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով հաշմանդամություն ունեցող անձանց համար սահմանված անվճար ուսման արտոնությունները անհրաժեշտ է ամրագրել նաև <<Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին>> և <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքներում դրանցում կատարելով համապատասխան փոփոխություններ և լրացումներ:	Ընդունվեց	Ընդունվեց